ԼԵՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գյուղատնտեսությունը ֆինանսական ներդրումների տեսանկյունից համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններից անմիջական կախվածությամբ: Գյուղատնտեսության ոլորտն առավել ևս աչքի է ընկնում ֆինանսական ներդրումների սակավությամբ, քանի որ առկա է նաև ցածր եկամտաբերության գործոնը: Ուստի զաղտնիք չէ նաև այն իրողությունը, որ տվյալ ոլորտի ռիսկայնությունից ելնելով, վարկերը տրամադրվում են բարձր տոկոսադրույքներով:

Հանրապետության ֆինանսատնտեսական զարգացման տեմպերն արագացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնցում էական դեր ունեն թե՛ պետական, և թե՛ մասնավոր ներդրումների վերաուղղումը դեպի գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունները, որոնք աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին, պարտավորվելով բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել արտադրությունը: 2014 թվականին վերամշակող արդյունաբերության ոլորտում վարկավորման ծավալները կազմել են 179,9մլրդ. դրամ, իսկ հարաբերական շեղումը՝ 9,2%՝ նախորդ տարվա նկատմամբ: Իրոք, գյուղատնտեսության մեջ վարկերի ներգրավումը բավականին բարդ խնդիր է, որովհետև դրանք համարվում են մեծ ռիսկայնություն ունեցող գործընթացներ, սակայն առանց վարկային միջոցների ներգրավման տնտեսության տվյալ ճյուղը կդադարի գոյություն ունենալուց և տնտեսական աճի ապահովում չի լինի: Տնտեսության զարգացման համար կարևոր է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային քաղաքականության վերանայումը, հատկապես տոկոսադրույքների նվազեցման, ինչպես նաև վարկերի վերադարձման ժամկետի խախտման դեպքում տուգանքների, պատժամիջոցների և ներդրման ավելի արդար մեխանիզմների ստեղծում, որն ավելի շատ անհրաժեշտ է հատկապես գյուղատնտեսական վարկերի ներդրման պարագայում:

Վերամշակման ոլորտում կարևորությունը՝ բուսաբուծության և անասնաբուծության ոլորտների ցիկլային աճի որոշակիորեն ազդեցությունն է մթերք վերամշակող արդյունաբերության զարգացման վրա, որի ակտիվացումն ու արտահանման ծավալների աստիճանական ավելացումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմանը և գյուղացիական տնտեսությունների *ապրանքայնության մակարդակի* բարձրացմանը (զգալիորեն ցածր է), որը կազմում է 40-45%, և չի կարող ապահովել արդյունավետ վերարտադրություն, որով էլ պայմանավորվում է տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարման հնարավորությունները: Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններն աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին, իրենց առաջ խնդիր դնելով բարձրացնելու աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը՝ ներդնելով արդիական տեխնոլոգիաներ և դիվերսիֆիկացնել արտադրությունը, ինչպես նաև ընդլայնել ու զարգացնել հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունները: Հանրապետության հումք վերամշակող արդյունաբերությունն արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության ձևավորման հիմնական նախապայմանն է: Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման խնդիրներն առավել արդյունավետ

կերպով կարող են լուծվել ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

ՀՀ–ում գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության կազմակերպություններ, այդ թվում՝ 35 պտուղբանջարեղենի, 50 խաղողի վերամշակման, 70 կաթի մշակման, 70 մսի վերամշակման, 20 փոքր սպանդանոցներ, 60 ալրաղաց, 10 ձկնամթերքի, 700 հացաթխման, 135 հրուշակեղենի և մակարոնեղենի, 7 գարեջրի, 3 բուսական յուղի և 2 շաքարի արտադրության: Արդեն կան ընկերություններ, որոնք հաջողությամբ մրցում են ինչպես ներքին, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում՝ կատարելով ներդրումներ արտադրության հետագա զարգացման համար:

ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավարարության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2013-2014թթ. կտրվածքով հաշվարկված է ըստ ՀՀ ԱՎԾ- ի տվյալների (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման գծով հիմնական ցուցանիշներն ըստ 2013-2014թթ.

Արտադրատեսակը	*Չափի միավոր*	*Տեղական արտադրություն*		*Արտահանում*		*Ներմուծում*		*Ինքնաբավության մակարդակը, %*		*Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը, %*	
		2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	4943,8	5718,3	368	412,3	5388	5942,7	49,6	50,8	45,9	47,2
Պանիր	տոննա	17375,4	18317,3	1541,2	1542,4	1243,7	1187,9	101,7	102,0	92,7	93,4
Պտուղբանջարանոցային պահածոներ	տոննա	9989,6	11714,2	7954,5	9600,3	8174,9	8519,8	97,8	110,2	19,9	19,9
Հյութեր	հազ. լիտր	19544,2	21106,2	2013,3	2942,3	4429,6	2992,2	89,0	99,8	79,8	85,9
Հրուշակեղեն	տոննա	16543,6	18092,6	1118,7	1536,3	16374,3	16764,8	52,0	54,3	48,5	49,7
Մակարոնեղեն	տոննա	4093,1	4467,6	155,6	128,4	4825,4	5337,6	46,7	46,2	44,9	44,8
Կոնյակ	հազ. լիտր	20383,3	18725,5	18188	18556	911,6	4925,9	140,8	210,8	98,2	44,6
Գինի	հազ. լիտր	7216,7	6765,3	1398,5	2120,7	379,7	288,7	116,4	137,1	93,9	94,1
Գարեջուր	հազ. լիտր	19847,8	23716,,5	2346,4	1987,8	2731,1	2837,5	98,1	96,5	86,5	88,4
Բուսական յուղ	տոննա	4650,3	3967,7	1,8	0,9	26430,7	26204,8	15,0	13,2	15,0	13,1
Շաքարավազ	տոննա	69625	89189	899,2	200,0	4851,2	5643,8	94,6	94,2	93,4	94,0

Ագրովերամշակում minagro. am

Հանրապետության գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտին վերաբերող հիմնախնդիրների լուծման, տեղական արտադրողների մրցունակության բարձրացման, դրանց շահերի պաշտպանության, ստեղծված աշխատատեղերի պահպանման և նորերի ստեղծման, միջազգային շուկային ինտեգրման ու արտահանման ծավալների ավելացման նպատակով անհրաժեշտ միջոցառումները կարող են իրականացվել պետության կողմից հատուկ ծրագրերի շրջանակներում՝ առաջնային համարելով սննդամթերքի անվտանգության, ենթակառուցվածքների կարողությունների հզորացման, գյուղական համայնքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, գիտական կադրերի պատրաստման ու այլ նմանատիպ հարցեր:

Անհրաժեշտ է ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կարողությունների հզորացման և մրցունակության բարձրացման միջոցով ապահովել հիմնական պարենամթերքի ներմուծման փոխարինում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքով՝ ապահովելով ինքնաբավության մակարդակի բարձրացում:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի վերլուծության համաձայն, մի շարք անհրաժեշտ առաջնային պարենամթերքների ինքնաբավության մակարդակը բավականին ցածր է: Ըստ աղյուսակ 2-ի տվյալների 2014թ. դրությամբ դրանց թվում են՝ բուսական յուղը (13,2%), մակարոնեղենը (46,2%), հրուշակեղենը (54,3%) և այլն:

Բացի վերոհիշյալներից այսօր կարևորվում է նաև ՀՀ գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացը գյուղացիական տնտեսությունների կողմից (տե՛ս աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

ՀՀ գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2013-2014թթ.

(տոկոսով)

	Ընդամենը	այդ թվում՝					
		վաճառվել է	տրվել է ապրանքափոխանակման	տրվել է մթերքով ծառայությունների դիմաց	օգտագործվել է տնտեսությունում	Ընդամենը վերամշակվել է	մնացորդ տնտեսությունում
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
Հացահատիկ և հատիկաընդեղեն							
2013թ.	100	21,9	7,4	3,8	37,8	60,2	29,1
2014թ.	100	23.7	7.5	3.6	35.8	56.6	29.4
Կարտոֆիլ							
2013թ.	100	38.0	6.0	1.9	29 .9	-	24.2
2014թ.	100	35.9	7.0	1.8	26.2	-	29.1
Բանջարեղեն							
2013թ.	100	71.3	6.4	0.5	18.7	31.6	3.1
2014թ.	100	73.94.2	4.2	0.8	16.8	31.9	4.6
Բոստան							
2013թ.	100	84.2	5.3	-	10.5	-	-
2014թ.	100	81.8	5.3	1.3	11.6	-	-
Պտուղ և հատապտուղ							
2013թ.	100	58.0	8.3	1.1	27.0	33.2	5.6
2014թ.	100	51.8	6.6	0.6	32.3	44.7	8.7
Խաղող							
2013թ.	100	76.5	3.5	0.3	17.1	32.8	2.6
2014թ.	100	78.1	2.3	0.4	16.7	26.2	2.9
			Միս				
2013թ.	100	80.9	3.0	0.2	15.1	4.1	0.8
2014թ.	100	81,5	1,4	0,1	16,5	19,8	0,5
Կաթ և կաթնամթերք							
2013թ.	100	44.7	9.1	0.8	42.0	69.7	3.4
2014թ.	100	56,6	3,8	0,4	36,3	62,7	2,9
Ձու							
2013թ.	100	37.8	9.4	0.1	52.5	-	0.2
2014թ.	100	35,1	7,8	0,2	54,8	-	2,1
Բուրդ							
2013թ.	100	26.2	13.3	1.2	21.6	10.5	37.7
2014թ.	100	32,9	10,3	0,8	19,1	15,7	36,9
Մեղր							
2013թ.	100	49,7	6.2	0.9	29.0	-	14.2
2014թ.	100	41,4	5,4	0,4	38,1	-	14,7

ԱՎԾ- տվյալներն ըստ 2013-2014թթ.

Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդրի լուծման համար նախատեսվում է՝

- Գյուղատնտեսական մթերքների կանոնակարգված գործող մեծածախ շուկաների ձևավորումը, հավաքման կետերի, գյուղական մթերքների իրացման տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովումը:
- Հանրապետության մեծ քաղաքներում գյուղական մթերքների տոնավաճառների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը:
- Գյուղատնտեսական մթերքների վերամշակողների և արտադրողների միջև երկարաժամկետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը:
- Գյուղատնտեսական մթերքների արտահանման խթանումը:

Թե ինչպիսին է ՀՀ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կողմից առանձին ապրանքատեսակների գնումների ծավալները վերջին տարիների առումով ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից 2012-2014 թթ. պտղի, բանջարեղենի և խաղողի գնումների ծավալները

Հումքի անվանումը	*2012թ.*		*2013թ.*		*2014թ.*	
	հազ. դրամ	տես կշիռ.	Հազ. դրամ	տես կշիռ.	Հազ. դրամ	տես կշիռ.
Պտուղ ընդամենը	25620,0	100.0	28791,5	100.0	13875,8	100.0
այդ թվում՝						
Խնձոր	4767,0	18,6	5187,8	18,0	3084,1	22,2
Դեղձ	6163,4	24,1	1921,0	6,7	2917,0	21,0
Ծիրան	8854,1	34,6	13038,6	45,3	710,0	5,2
Կեռաս, սալոր, բալ	1454,9	5,7	2079,6	7,2	2776,9	20,0
Ընկույզ	213,0	0,8	232,7	0,8	165,0	1,1
Հատապտուղ	752,0	2,9	1714,4	6,0	1145,3	8,2
այլ պտուղ	3416,0	13,3	4617,4	16,0	3077,5	2,3
Բանջարեղեն ընդամենը	33645,8	100.0	27970,1	100.0	34076,9	100.0
այդ թվում՝						
Լոլիկ	26229,0	77,9	18970,0	67,7	23252,0	68,2
Վարունգ	355,5	1,0	468,5	1,7	598,7	1,7
Սմբուկ	2021,0	6,0	2324,0	8,5	3477,4	10,2
Պղպեղ	2313,0	6,9	2455,0	8,8	2801,0	8,3
Լոբի	831,0	2,5	1612,0	5,7	1644,0	4,8
այլ բանջարեղեն	1896,8	5,7	2140,6	7,8	2303,8	6,8
Խաղող	156590,2	-	167184,7	-	184149,0	-
Ընդամենը	215856,0	-	223946,3	-	232101,7	-

Ագրովերամշակում minagro. am

Հանրապետությունում մոտ 250,0 հազ. տոննա է կազմում պտուղբանջարեղեն վերամշակող կազմակերպությունների մթերման հզորությունները, որից բանջարեղենային պահածոների բաժինը կազմում է 154.,5 հազ. տոննա, պտուղ-հատապտղային պահածոներինը և հյութերինը՝ 94,5 հազ. տոննա: Հզորությունները օգտագործվում են ոչ ծանրաբեռնված, ընդհանուր մթերման հզորությունների 23,9%-ն է օգտագործվել, որից բանջարեղենային պահածոներինը՝ 21,2%-ը, իսկ պտուղ-հատապտղայինը և հյութերինը՝28,6%-ը:

Աղյուսակ 4

ՀՀ գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների արտադրության ծավալները 2010-2014թթ.

Արտադրատեսակները	*Չափի միավոր*	*Արտադրությունը*				
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակող (ներառյալ ներքին սպառումը)	տոննա	54497,3	60987,1	65895,7	72334,6	82257,1
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	3953,5	4488,8	4757,0	4943,8	5718,3
Պանիր	տոննա	17050,0	17525,0	17658,0	17375,4	18317,3
Կաթ, կաթնամթերք (վերահաշվարկ-ված կաթի)՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերահաշվարկումը (բացառությամբ ներքին սպառումը)	տոննա	279400,0	315800,0	319800,0	362700,0	386500,0
Պաղպաղակ	հազ. լիտր	3312,9	3480,8	3628,6	4265,1	6345,0
Հրուշակեղեն	տոննա	11589,4	13013,2	14319,8	16543,6	18092,6
Մակարոնեղեն	տոննա	2614,8	3247,9	3563,0	4093,1	4467,6
Բուսական յուղ	տոննա	1034,3	696,5	2656,1	4650,3	3967,7
Կենդանական յուղ	տոննա	950,4	812,8	645,5	518,0	1092,5
Պահածոներ ընդամենը	տոննա	8025,0	11772,6	9134,2	9989,6	11714,7
այդ թվում՝բանջարեղեն	տոննա	4558,7	4248,2	2951,2	2814,2	4856,3
Կոնյակ, օղի	հազ. լիտր	24535,8	24568,0	28586,6	30222,6	28231,6
Բնական հյութեր	հազ. լիտր	11689,5	14615,2	116741,6	19544,2	21106,2
Գինի և շամպայն	հազ. լիտր	6430,2	6814,6	6192,5	7216,7	6765,3
Գարեջուր	հազ. լիտր	15352,7	14744,3	13668,2	19847,8	23716,5
Ոչ ալկոհոլային	հազ. լիտր	38232,1	45756,0	45320,8	63400,0	79972,6
Հանքային ջուր	հազ. լիտր	30000,0	29232,8	32977,3	43215,3	58618,3
Շաքարավազ	տոննա	32508,4	72159,4	69267,0	69625,0	89189,0

Աղբյուրը՝ minagro. am

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների 2014 թվականին 2013 թվականի համեմատ գրանցվել է որոշակի աճ՝ հումքի վերամշակումից ստացվող որոշ արտադրատեսակների ծավալներում, մասնավորապես՝ մսամթերքն ավելացել է 15.6%-ով, կաթն ու կաթնամթերքը՝ 6,5 %-ով, բնական հյութերը՝ 8,0%-ով, գարեջուրը՝ 19.5%-ով, հրուշակեղենը՝ 9.3 %-ով, իսկ շաքարավազը՝ 28.0%-ով:

Այս առաջընթացը պայմանավորված է ի հաշիվ գործող և նոր ստեղծվող արտադրական կազմակերպության արդիական տեխնոլոգիաների կիրառման, արդյունավետ կառավարման և մարքեթինգային ծառայությունների զարգացման հաշվին: Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկա-կան միջոցների մատակարարման, որակի գծով չափորոշիչների կիրառման հիմնահարցերը կա-րող են լուծել հումք արտադրողների և վերամշակողների միջև շատ կարևոր՝ պայմանագրային հարաբերություններ, որոնք կնպաստեն փոխշահավետ համագործակցության զարգացմանը՝ հիմնական նպատակը լինելով, ինչպես արտադրական հզորությունների տեսականու ընդլայ-նումը, այնպես էլ արտադրանքի մրցունակության բարձրացումը:

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԼԵՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը ներդրումների տեսանկյունից բարձր ռիսկային է, պայմանավորված ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլ նաև ցածր եկամտաբերության գործոնից էլ կախված, վարկերի բարձր տոկոսադրույքներով: Հայաստանում կարևորվում են ագրովերամշակող կազմակերպությունները, որոնցում իրական դեր ունեն թե՛ պետական, և թե՛ մասնավոր ներդրումները: Վերջիններս էլ հարմարվելով շուկայական պայմաններին և ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, կպարտավորվեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի մրցունակությունը: Վերլուծությունները պայմանավորված են գործող և նոր ստեղծվող կազմակերպություններում արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ, արդյունավետ կառավարմամբ և մարքեթինգային ծառայությունների զարգացմամբ:

Բանալի բառեր, *ներդրումներ, ռիսկային, վարկեր, եկամտաբերություն, տոկոսադրույք, բարձր տեխնոլոգիաներ, առաջընթաց, վերամշակող, մրցունակություն, արտադրանք:*

ПУТИ УЛУЧШЕНИЯ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ПРОДОВОЛЬСТВИЯ АГРОПЕРЕРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

ЛЕНА МНАЦАКАНОВНА ОГАНИСЯН, *к.э.н*
старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Инвестиции в сельском хозяйстве считаются высокорисковыми, что обусловлено не только природно-климатическими условиями, но также предоставлением в зависимости от фактора низкой доходности высокопроцентных кредитов. В Армении важное значение имеют агроперерабатывающие предприятия, в которых существенная роль принадлежит как государственным, так и частным инвестициям. Предприятия, приспосабливаясь к рыночным условиям и внедряя высокие технологии, обязаны повышать производительность труда и конкурентоспособность продукции. Исследования обусловлены важностью примененния современных технологий в действующих и вновь создаваемых предприятиях, эффективным управлением последних и развитием маркетинговых услуг.

Ключевые слова: *инвестиции, рисковые кредиты, доходность, процентная ставка, высокие технологии, прогресс, перерабатывающая, конкурентоспособность, продукция.*

APPROACHES TO IMPROVING THE PRODUCTION, DISTRIBUTION AND SALES IN THE AGRI-PROCESSING SECTOR OF THE REPUBLIC OF ARMENIA

LENA MNATSAKAN HOVHANNISYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Investments in the agriculture are highly risky associated with not only natural disasters, but also with low rates of profitability, and high loan interest rates. In Armenia, the role of agri-processing companies is stressed and therefore, the Government and private sector investments play a crucial role. These companies, by facing the challenges of the market and investing in high technology, would increase labor productivity, and competitiveness of produced items. The analysis is based on the utilization of modern technology, management practices and application of marketing tools in the acting and newly established companies.

Keywords: *Investment, risky, loans, profitability, interest rate, high technology, progress, processing, competitiveness, production.*